եռանդով պտտում էին ուխտաւորների բանակի մէջ, կատարելու նրանց պահանջները: Մղդսիներն էին վաճառում մատաղացու ոչխարները եւ մատուցանում էին ուխտաւորներին ինչ որ նրանց պէտք էր: Եւ դրանց մէջն էր վանքի սպասաւորների օգուտը: Ամէն մի կտրած մատաղի ազդրը մղդսիների սեփականութիւնն էր, իսկ մորթը պատկանում էր վանքին: Եւ վարդապետների թիւը մղդսիներից պակաս չէր, որոնք հաւաքում էին մորթերը:

Պառաւ Խաթունը վաղուց գնել էր մեր մատաղացու ոչխարը, մի սպիտակ, անարատ խոյ:

— Ի՞նչ եղաւ, ուշացաւ վարդապետը, — ասում էր անդադար պառաւը: — Չեկաւ, որ աղը օրհնէ :

— Ի՞նչ պէտք է օրհնած աղը, — հարցրի ես:

— Կարծես, հայ — քրիստոնեայի տղայ չլինի, — պատասխանեց պառաւը կծու կերպով. — այսքանն էլ չէ իմանում, բայց հինգ տարի վարժատուն է գնացել, գիրք է կարդացել...

Մարօն ասաց՝ թէ օրհնած աղը նրա համար է, որ ուտացնում են մատաղին նախքան նրան զոհելը:

Վերջապէս յայտնուեցաւ վարդապետը: Նա այնքան զբաղուած էր, որ հազիւ ժամանակ ունեցաւ առնել իր ափի մէջ մի քիչ աղի փշրանք, որը մօտեցրուց իր բերանին, անլսելի ձայնով փնթփնթաց նրա վրայ մի քանի խօսքեր — ի հարկէ աղօթք պէտք է լինէր — եւ ապա տուեց աղը պառաւ Խաթունին: Պառաւը առեց աղը, վարդապետի աջը համբուրելով, եւ միեւնոյն ժամանակ կոխեց նրա ափի մէջ մի բան: Վարդապետը շնորհակալութիւն յայտնեց, օրհնեց եւ հեռացաւ, ասելով՝ «ընդունելի մատաղ լինի, սուրբ աստուածածնի օրհնութիւնը ձեզանից անպակաս լինիէ եւ այլն:

Աղն ուտացրինք ոչխարին, խեղճ անասունը այնպէս ախորժանոք կերաւ,ամենեւին չմտածելով, թէ այնուհետեւ որպիսի դառն վիճակ էր սպասում նրան:

Թէեւ ես երկար թափառեցի ուխտաւորների բանակի մէջ, բայց տակաւին իմ նպատակին հասած չէի. սալմաստեցիներից ոչ մէկին չտեսայ: Վանքի մղդսին յայտնեց՝ թէ նրանց քարաւանը իջեւանել է բլուրի միւս կողմում, որովհետեւ սալմաստեցիք, ուխտաւորների վերջինները լինելով, վանքի մօտակայքում տեղ չգտան: Երբ ես տուեցի նրան երկու ղուրուշնոցը, նա յանձն առաւ տանել ինձ եւ ցոյց տալ նրանց տեղը:

Եւ իրաւ, իւրաքանչիւր երկրի ուխտաւորների քարաւանը իջեւանել էր մի առանձին տեղում: Ամբողջ կէս ժամ մենք անց էինք կենում այն ընդար-